



Ապրիլի 21-ին, կիրակնօրյա Սուրբ Պատարագից հետո, Վիրահայոց թեմի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում կայացավ «Հայարտուն» կենտրոնի ցուցատախտակի շնորհանդեսը: Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը օրհնության և ողջույնի խոսքում արժևորեց ռուսաստանաբնակ Բորիս Սաակովի և մյուս

բարերարների նվիրատվությամբ կառուցված «Հայարտուն» կենտրոնի դերն ու նշանակությունը թբիլիսահայ համայնքի կյանքում, որից հետո այցով թբիլիսիում գտնվող ռուսաստանաբնակ բարերար Արթուր Սաակովը հանդիսավորությամբ բացեց ցուցատախտակը:

Ներկաներին շնորհավորելով ցուցատախտակի հանդիսավոր բացման կապակցությամբ, երիտասարդ բարերարը իր գոհունակությունը հայտնեց Վիրահայոց թեմին և նրա առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանին «Հայարտուն» կենտրոնում ծավալված ազգանվեր գործունեության կապակցությամբ, ինչը միանգամայն գերազանցեց բոլոր սպասումները:

Այնուհետև «Հայարտուն» կենտրոնի «Սուրբ Մովսես Խորենացու» անվան նախակրթարանի

սաների կատարմամբ հնչեց Հայաստանի Հանրապետության պետական հիմնը: